ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿԱԹՆԱՄԹԵՐՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
ՎԻՀՄԱԱՊՁԲ18/16

Ք.Վանաձոր

02. 10. 2018թ

«Վանաձոր քաղաքի Ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ն, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, ի դեմս տնօրեն Ռ.Հ.Չիլինգարյանի (այսուհետ Պատվիրատու) մի կողմից, և «Դիետ» ՍՊԸ-ն, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, ի դեմս տնօրեն Ռ. Թոթոյյանի (այսուհետ Կատարող)՝ մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատակարարել կաթնամթերք(Հավելված 1), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա դիմաց:

2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Կատարողը

2.1.1 Պարտավորվում է Պատվիրատուին տրամադրել պատվիրվող ստանդարտի համապատասխանող որակի և քանակի կաթնամթերք:

2.1.2 Պարտավորվում է մատակարարվող ապրանքի հետ Պատվիրատուին տրամադրել հաշիվ ապրանքագիր:

2.1.3 Իրավունք ունի ապրանքի դիմաց չվճարելու դեպքում դադարեցնել ապրանքի մատակարարումը:

2.2 Պատվիրատուն

2.2.1 Պարտավորվում է 1 օր առաջ Կատարողին ներկայացնել պահանջվող Ապրանքի տեսակի և քանակի վերաբերյալ պատվերը:

2.2.2 Պարտավորվում է Ապրանքը ստանալուց հետո ապրանքագիրը հաստատել լիազորված անձի ստորագրությամբ:

2.2.3Իրավունք ունի չվճարել անորակ Ապրանքի համար:

3.ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Ապրանքի գինը կայուն չէ և այն կարող է փոփոխվել՝ կապված Ապրանքի շուկայական գնի տատանումների հետ:

3.2 Պատվիրատուն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ գումարը Կատարողի հաշվարկային հաշիվ փոխանցելու միջոցով մինչև հաջորդ ամսվա 20-ը:

4.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1Կատարողը պատասխանատվություն է կրում մատակարարման Ապրանքի ստանդարտին համապատասխանելու և որակի համար:

4.2Պատվիրատուն պատասխանատվություն է կրում Ապրանքի ընդունելու դեպքում գումարի վճարման համար:

5. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ գրավոր ձևով: Այն կհանդիսանա սույն պայամանագրի անբաժանելի մասը: